ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՊԱՐԵՏԻՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

01.04.2020 11:14

Պարետի 31.03.2020թ. № 27 որոշման № 1 հավելվածով սահմանվել է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ ժամանակավոր սահմանափակումները, իսկ № 2 հավելվածով՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ ժամանակավոր սահմանափակումները:

Նշված որոշման № 2 հավելվածի աղյուսակ 1-ում (Մ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն բաժնում՝ 69.10 կոդի դիմաց «**Թույլատրված**» սյունակում նշվել է «**Բացառությամբ փաստաբանական գործունեության մասով**», իսկ «**Արգելված**» սյունակում՝ «**Մեծամասամբ արգելվում է: Հնարավոր է բացառապես առցանց կամ հեռավար եղանակով**» բառերը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը 01.04.2020 թվականին դիմել է պարետ Տիգրան Ավինյանին խնդրելով՝

Ա. Պարզաբանել՝

1. Արդյո՞ք փաստաբանական գործունեությունը Պարետի որոշմամբ սահմանափակվել կամ արգելվել է:

2. Եթե սահմանափակվել է, ապա՝ արդյո՞ք փաստաբանական գործունեությունը թույլատրվել է միայն առցանց կամ հեռավար կարգով. եթե այո, ապա ինչպե՞ս կարող է փաստաբանը մեղադրյալի հարցաքննությանը, քննչական այլ գործողություններին, կամ կալանավորման հարցը որոշող դատական նիստերին մասնակցել առցանց կամ հեռավար կարգով[1]:

Բ. Փոփոխություն կատարել Պարետի 31.03.2020թ. № 27 որոշման № 2 հավելվածի Աղյուսակ 1-ում՝ (Մ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն բաժնում՝ 69.10 կոդի դիմաց՝

1. «Թույլատրված» սյունակում նշված «**Բացառությամբ փաստաբանական գործունեության մասով**» բառերը փոխարինել «**Բացառապես փաստաբանական գործունեության մասով**» բառերով.

2. «Արգելված» սյունակում՝ «**Մեծամասամբ արգելվում է: Հնարավոր է բացառապես առցանց կամ հեռավար եղանակով**» բառերից հետո լրացնել «**Փաստաբանական գործունեությունը հնարավոր է իրականացնել ամբողջ ծավալով՝ Պարետի 31.03.2020թ. № 27 որոշման 3-րդ կետի պահպանման պայմանով»:**

Գ. Փոփոխություն կատարել Պարետի 31.03.2020թ. № 27 որոշման № 1 հավելվածի 7-րդ կետում՝

1) «5-րդ կետի» բառերը փոխարինել «6-րդ կետի» բառերով.

2) 3-րդ ենթակետում՝ «նույն ընկերության» բառերը փոխարինել «նույն գործատուի» բառերով:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.04.2020թ. գրությունը.

[1] «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արտակարգ դրության ժամանակ սույն հոդվածով նախատեսված միջոցառումների իրականացումը չի կարող խոչընդոտել ...Հայաստանի Հանրապետության դատարանների .... բնականոն գործունեությունը:

Առաջարկվող նորություններ

11.03.2020ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ՝ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

18.03.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՁԵՌՆԱՐԿԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ)

24.03.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՊԱՐԵՏԻՆ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })